

# ԱՍՏԾՈ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

## որբերի, որբևայրիների աղքատների և ընկճվածների համար





# ԱՍՏԾՈ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

## որբերի, որբևայրիների, աղքատները և ընկճվածների համար

Դերեկ Պրինս

Երևան - 2013

Հայերեն թարգմանության բոլոր իրավունքները պատկանում են «Դերեկ Պրինսի ծառայությանը»:
**Մենք ուրախ կլինենք կապ հաստատել մեր ընթերցողների հետ, ստանալ նրանց առաջարկությունները ու վկայությունները: Մեզ հետ կարող եք կապ հաստատել հետևյալ միջոցներով.**

**dpmarm@gmail.com**

**www.derekprince.com**

Դուք կարող եք բաժանորդագրվել Դերեկ Պրինսի ուսուցումների ֆեյսբուքյան էջին և ամեն անգամ ստանալ մտքեր և ուսուցումներ հայերենով, տեղեկանալ մեր նորություններին, մասնակցել քննարկումներին հետևյալ հասցեում.

**www.facebook.com/www.derekprince.org**

*Աստված հոգում է կարիքավորների համար, իսկ մե՞նք:*

*Այս պեղին արված հաղորդագրության մեջ Դերեկ Պրինսը քննարկում է այն չափանիշը, համաձայն որի Աստված դարերի միջոցով չափել է Իր ժողովրդի արդարությունը, իրենց գործնական հոգածությունը որբերի, այրիների, աղքատների և ընկճվածների հանդեպ: Ահա թե ինչպես է Աստված գնահատում մեզ այսօր:*

16 տարի առաջ, երբ ես նորադարձ քրիստոնյա էի, իմ սրտի հետ խոսեց Աստված, Նա իմ հայացքը ուղղեց որբերի, այրիների ու չքավոր մարդկանց վրա: Մեծ ցավ էի ապրում նրանց մասին մտածելուց, սակայն այդ ժամանակ ես ոչնչով չէի կարողանում օգնել, որովհետև ես և իմ ընտանիքը նույնպես դժվար ժամանակներով էինք անցնում: Ես սկսեցի աղոթել. «Տե՛ր. օգնի՛ր ինձ, որ ես կարողանամ օգնել այս հասարակությանը, որն ամենախոցելին է»: Տարիներ շարունակ աղոթում էի, որ կարողանամ որբ երեխաների համար լինեմ մեկը, ինչպես Հոբն էր ասում. ,«Ես կույրին աչքեր էի, կաղին՝ ոտքեր, աղքատին հայր էի, պաշտպանում էի իրավունքը նրա, ում չէի ճանաչում և անիրավի ժանիքները կոտրելով՝ բերանից հափշտակվածն էի խլում» (Հոբ 29:15,16,17): 12 տարի անց իմ սիրելի երկնային Հայրը պատասխանեց իմ աղոթքներին, Նա բացեց հնարավորություններ իմ առջև, Նա իմ կյանքի մեջ դրեց այն հրաշալի մարդկանց, ովքեր իրական Աստծո զավակներ են, և դռներ բացեց, որը դարձավ միջոց՝ հասնելու, գտնելու և օգնելու կարիքի մեջ եղող ժողովրդին: Այսօր մենք կարողանում ենք անել այն, ինչի համար տարիներ շարունակ աղոթել ենք:

Աստված իրեն անվանում է որբերի Հայր և Ինքն անձամբ մտահոգված է նրանց կյանքով ու ապագայով: Աստված կոչ է անում այսօր իր զավակներին, որ մեծագույն սեր ցուցաբերեն որբերի, այրիների և չքավոր ժողովրդի հանդեպ: Տիրոջ կամքն է, որ որբ երեխաները որբության դառը զգացողությունը չունենան:

Ծառայությունն այս խոցելի հասարակության հանդեպ ոչ միայն հասարակական բարի գործ է, այլ նաև կենդանի և օրինյալ Ավետարանը գործի մեջ դնելն է: Եկեք միասին փոխանցենք երկնային Հոր սերը զալիք սերունդներին, նրանք մեր ապագան են: Եթե այսօր մենք չգործենք, ապա մի քանի տարի հետո գուցե փողոցում հանդիպենք հանցագործ կամ արբեցող երիտասարդ տղաների կամ աղջիկների, ովքեր կարող էին լինել հիանալի հայրեր կամ մայրեր, գուցե բժիշկ-ներ, կամ երգիչներ, կամ մեկը, ով կհայտնաբերեր քաղցկեղի բուժման դեղորայքը, գուցե կլինեին հիանա-լի դերասաններ կամ երկրի նախագահը: Սիրելինե՛ր, որբերը հրաշալի երեխաներ են, այրիները շատ մերժ-ված են, չքավորները լավ մարդիկ են, նրանք մեր նման չեն սնվում, նրանք չունեն այնպիսի ընկերներ, ինչ-պիսին մենք ունենք, նրանց ժպիտը նման չէ մեր ժպիտին: Եկե՛ք նրանց երջանկացնենք, եկե՛ք նրանց օգնենք, որ իրոք դառնան այն մարդիկ, ում մասին երազում է Հայր Աստվածը, չէ՞ որ նրանք մեր ապագան են: Եվ քանի դեռ նրանք կան, մենք պետք է գտնենք և բացահայտենք նրանց գուցե ինչ–որ մի խոնավ տան մեջ կամ ժամանակավոր կացարանում: Նրանք գուցե հիվանդ, մերկ կամ սոված մեզ են սպասում, որպեսզի գնանք, գտնենք, տանենք նրանց այն սերը, որի մասին Տեր Հիսուսը մեզ պատվիրել է իր խոսքում. «Ճմարի՛տ ասում եմ ձեզ, քանի որ այս փոքրերից մեկին արեցիք, ի՛նձ արեցիք» (Մատթեոս 25:40):

Սիրելինե՛ր, մենք պետք է հիշենք, որ ժամանակներ

առաջ մենք էլ հոգևորապես էինք որբ, բայց մեր սիրելի Հայրը մեզ գտավ, որդեգրեց և ընդունեց իր մեծ ընտանիքի մեջ՝ մեր սիրելի Տեր Հիսուս Քրիստոսի զոհի շնորհիվ:

Դերեկ Պրինսի յուրաքանչյուր գիրքն արդի քրիստոնեության մեջ մեծագույն գանձ է, սակայն այս՝ «Աստծո հոգատարությունը որբերի, որբևայրիների, աղքատների և ընկճվածների համար», գիրքը առանձնահատուկ օծված և օրհնված գիրք է: Այն շատ մեծ օրհնություն կարող է դառնալ ձեր ընտանիքների համար: Ընթերցե՛ք և կիրառե՛ք մեծագույն գանձեր ձեր ներսում:

Թո՛ղ Աստված ձեզ օրհնի, և երբ որ ընթերցեք այս հրաշալի գիրքը, թող որ դրա ամեն մի էջը, ամեն մի տողը և ամեն մի խոսքը խոսի ձեր հրաշալի և բաց սրտի հետ, որ դուք էլ խորը հայտնություններ ստանաք լքված, մոռացված և խոցելի հասարակության մասին: Աստված առատապես օրհնի ձեզ, ձեր ընտանիքները և ձեր ծառայությունը:

Մեծագույն սիրով՝ Գյումրու «Միջազգային Փառաբանության Կենտրոն»:

Հովիվներ՝ *Արա և Անահիտ Կոչոյաններ*

# ՈՐԲԵՐԸ, ՈՐԲԵՎԱՅՐԻՆԵՐԸ, ԱՂՔԱՏՆԵՐԸ ԵՎ ԸՆԿՃՎԱԾՆԵՐԸ

Հավատում եմ, որ Աստված սրտիս մի բան է դրել, որը կարող է բանալի լինել՝ Աստծո մարդկանց ներգրավելու Ավետարանի ավելի արդյունավետ քարոզչության մեջ: Եկեք խոսենք որբերի, որբևայրիների, աղքատների և ընկճվածների հանդեպ ունեցած մեր պատասխանատվության մասին որպես քրիստոնյաներ:

Շատերն են խոսում որբևայրիների և որբերի մասին, բայց Աստվածաշունչը միշտ այլ հերթականությամբ է խոսում նրանց մասին՝ «որբեր և որբևայրիներ», որովհետև որբերն ամբողջովին են անօգնական, իսկ որբևայրիները՝ միայն մասնակի: Եվ Աստվածաշունչն ավելին է խոսում այս թեմայի շուրջ, քան մեզանից շատերը գիտեն: Ես արդեն հիսուն տարի քարոզում եմ, բայց այս թեման երբեք չեմ հասկացել այնքան խորը, որքան այս վերջին շաբաթների ու ամիսների մեջ է ինձ այն բացվել:

1928թ. իմ առաջին կինը՝ Լիդիան՝ ազգությամբ դանիացի, Երուսաղեմում հիմնեց փոքր մանկատուն: Նա մանկատուն ընդունեց մահամերձ փոքրիկ հրեա մի աղջնակի: Չունենալով ոչինչ բացի իր ճամպրուկից, Լիդիան դատարկեց իր ճամպրուկը, փաթաթեց երեխային իր ներքնազգեստով և սկսեց հոգ տանել

նրա համար: Այս պատմությունը ներառված է իր՝ «Ժամադրություն Երուսաղեմում» գրքի մեջ: Այն շատ հուզիչ, հետաքրքիր, իրական պատմություն է: Շատ հպարտ եմ, որ նա իմ կինն էր:

Կուզենայի համակարգված եղանակով մոտենանք այս թեմային՝ որբերի, որբևայրիների, աղքատների և ընկճվածների հանդեպ ունեցած մեր պատասխանատվությանը: Նախ և առաջ ուզում եմ միասին ուսումնասիրենք Աստծո էությունը, ապա անդրադառնանք Աստծո արդարության պահանջներին:

# Աստծո էությունը

Նախ եկեք դիտենք Աստծո էությունը: Սաղմոս 103:6–ում ասվում է Աստծո մասին հետևյալը.

*«Տերն արդարությամբ ու իրավունքով է գործում բոլոր զրկյալների հանդեպ»:*

Սա է Աստծո բնավորությունը: Նա որբերին Հայր է, այրիներին՝ պաշտպան:

Չեմ կարծում, որ մեզանից շատերը գիտակցում են, թե որքան շատ է Աստված հոգ տանում նրանց համար, ովքեր ճնշված են: Մարդկության մեծամասնությունը այս ժամանակահատվածում ընկճված է: Մարդկային ռասայի փոքրամասնությունն է, որ արդար վաստակ է ստանում և արժանանում հարգալից վերաբերմունքի: Այսօր մարդկության մեծ մասը ստանում է անարդար և անազնիվ վերաբերմունք: Աստված հոգում է և սիրում է նրանց: Նա ուզում է օգնել իրենց: Նաև Աստված շատ բարկանում է բոլոր նրանց վրա, ովքեր ճնշում են որբերին և որբևայրիներին:

Հետո Սաղմոս 140:12–ում ասվում է.

*«Գիտե՛մ, որ Տերը պաշտպանելու է ճնշվածների դատն ու աղքատի իրավունքը»:*

Աստծո էությունն է հոգալ տառապյալների մասին և ցանկանալ արդարություն աղքատների համար:

Եվ եկե՛ք իրականության աչքերին նայենք. անկեղծ ասած, երկրի վրա այնքան էլ շատ չեն այն վայրերը, որտեղ աղքատները իրոք կարող են հուսալ արդարությանը: Անշուշտ, ո՛չ Բրիտանիայում, և ո՛չ էլ ԱՄՆ–ում այդպես չէ:

## Արդարության հասնելու պայմանները

Այժմ եկեք ուսումնասիրենք Աստծո արդարության չափանիշների նկարագիրն այն բոլոր հիմնական ժամանակաշրջաններում, որոնց մասին Աստվածաշնչում խոսվում է՝ սկսած նահապետական ժամանակաշրջանից (այստեղ ի նկատի ունենք Մովսեսից առաջ ընկած ժամանակահատվածը): Խոսքը գնում է Աբրահամի, Իսահակի և Հակոբի ժամանակաշրջանների և նույնիսկ դրանից ավելի վաղ ընկած ժամանակաշրջանների մասին:

### Նահապետները

Աստծո արդարության չափանիշները բացահայտող հիմնական գիրքը Հոբի գիրքն է, որը շատ գերող, խրախուսող և մարտահրավեր նետող գիրք է: Հոբ 29–ում Հոբն ինքն է տալիս մեզ իր արդարության բնութագիրը: Անձամբ ինձ չափազանց հետաքրքիր

և գրավիչ է թվում այն, թե ինչպես է Հոբը մարդկանց վերաբերվում:

Հոբ 29:11–13–ում գրված է.

*«Ինձ լսող ականջն օրհնում էր ինձ, իսկ ինձ պեսնող աչքը վկայում էր իմ մասին, քանի որ ես փրկում էի աղաղակող աղքատին, որբին ու անօգնականին: Կործելու վրա եղողի օրհնանքն ինձ վրա էր գալիս, որբևայրու սիրտն օրհներգությամբ էր լցվում»:*

Ո՞ւմ մասին է նա խոսում. դե իհարկե՛ որբերի, այրիների, աղքատների և ճնշվածների: Հետո նա այս ուշադրավ հայտարարությունն է անում նրանց համար, ովքեր հետաքրքրված են վարդապետությամբ:

*«Արդարություն էի հագնում, ու դա ծածկում էր ինձ. իմ արդարադատությունը թիկնոցի ու խույրի էր նման»:*

*Հոբ 29:14*

Մեզանից ոչ ոք իր սեփական արդարությունը չունի: Հոբի ապրած ժամանակաշրջանի ամբողջ ընթացքում նա ասում էր. «Ես արդարություն էի հագած, և այն ծածկում էր ինձ»: Մեզանից յուրաքանչյուր ոք, ով արդար է համարվում Աստծո առաջ ամեն դարաշրջանում, ծածկված է արդարությամբ, որը մեզ չի պատկանում: Մենք չունենք սեփական

արդարություն: Նախապետական ժամանակաշրջանում Հոբն ասում է. «Արդարություն էի հագած (ոչ իմ սեփական), և այն ծածկում էր ինձ: Ահա թե ինչպես էր նրա արդարությունն արտահայտված.

*«Կույրի համար աչք էի ու կաղի համար՝ ոտք: Աղքատին հայր էի. պաշտպանում էի իրավունքը նրա, ում չէի ճանաչում: Անիրավի ծնոտը կոտրում էի, ու նրա ժանիքներից խլում էի հափշտակվածը»:*

*Հոբ 29:15–17*

Ուշադրություն դարձրեք Հոբի արդարության ընդհանուր նկարագրին: Նա ասում է. «Ես ազատում էի աղաղակող տնանկին, նաև որբին և անօգնականին: Կորածի օրհնությունն ինձ վրա էր գալիս և որբևայրու սիրտը ուրախացնում էի»: Հետաքրքիր է, թե արդյոք դուք կարո՞ղ էիք երբևէ այդպես ասել: Երբևէ ինչ–որ բան արե՞լ եք այրիի համար, որ կուրախացներ նրա սիրտը: Որբևայրիները հեռու չեն: Մենք դրան կանդրադառնանք մի փոքր ուշ:

Հետո Հոբ 31–ում Հոբը հաստատում է իր արդարությունն Աստծո առաջ: Այսպես վարվելով՝ նա հրաժարվում է տարբեր մեղքերի մեջ մեղավոր լինելուց և թվարկում է մի շարք մեղքեր, որոնք ինքը չէր կատարել: Ամենաշատն ինձ մոտ տպավորվել է այն թվարկված բաները, որ նա համարում էր մեղսա-

վոր: Ուզում եմ դիտենք Հոբ 31–ից ընդամենը մի հատված: Դուք պետք է հիշեք, որ խոսքը գնում է այն արարքների մասին, որոնք, ինչպես Հոբն ասաց, ինքը չի արել, որովհետև նա դրանք մեղսալից էր համարում: Եթե նա արած լիներ այդ բաները, նա Աստծուց ողորմություն չէր կարող սպասել:

*«Եթե չեմ փվել աղքատի խնդրածը կամ մաշեցրել եմ որբևայրու աչքերը կամ պատառս մենակ եմ կերել ու դրանից որբն էլ չի կերել...»:*

*Հոբ 31:16–17*

Այրու աչքերն արտասվելու պատճառ հանդիսանալը, կերակուրը մենակ ուտելը, շուրջ բոլորը քաղցած մարդիկ լինելը. այս բոլորը Հոբը համարում է մեղսալից:

Հոբն ասաց, որ նա երբեք մեղավոր չի եղել նման բաներում: Իսկ դուք կարո՞ղ եք նույնն ասել:

Հետո նա շարունակում է.

*«...իմ երիտասարդ օրերից ինձ մոտ, հոր պես մեծացրի նրան, ու մորս արգանդից գթացի այրուն: Եթե տեսել եմ մեկին, որ փառապում է հագուստի պակասությունից, կամ ծածկոց չունեցող մի աղքատի...»:*

*Հոբ 31:18–19*

Հոբը պարզապես ասում էր. *«Եթե փեսել եմ մեկին, ով հագուստ չուներ և ոչինչ չեմ արել, դա մեղք է»*:

Այնուհետև նա ասում է.

*«Եթե նրա երանքը չեն օրհնել ինձ, ու իմ ոչխարների բրդով չի տաքացել...»:*

*Հոբ 31:20*

Եթե Հոբը տեսնում էր մի մարդու, ով հագուստի կարիք ուներ, վերցնում էր իր սեփական ոչխարներին, խուզում էր դրանց և նրան տալիս բուրդը: Հիշե՛ք, որ եթե Հոբը չաներ այդ ամենը, ապա ինքն իրեն մեղավոր կհամարեր:

Նա շարունակում է.

*«Եթե որբի վրա ձեռք եմ բարձրացրել, երբ դարպասի մեջ տեսա իմ օգնությունը, թող իմ ուսոսկրը կոտրվի, ու բազուկս արմունկիցս պոկվի»:*

*Հոբ 31:21–22*

Ինչպիսի՜ հիանալի հայտարարություն:

Հասկանո՞ւմ եք, թե ինչ է նա ասում: Նա ասում է. «Եթե չեմ օգտագործել իմ բազուկը՝ կարիքավորին օրհնելու, որբևայրիներին օգնելու, քաղցածներին կերակրելու համար, ապա այն իրավունք չունի իմ մարմնի մաս լինելու: Այդ դեպքում այն անհրաժեշտ

չէ»: Իսկ դուք կարո՞ղ էիք նման բան ասել: Թե՞, միգուցե, Հոբն այն չափանիշներն ուներ, որը տարբերվում է մեր այսօրվա չափանիշներից: Եվ ո՞վ է ճիշտ՝ Հո՞բը, թե՞ մենք:

Այս խոսքերն ինձ մարտահրավեր են նետում: Ես կարդացել եմ դրանք նորից ու նորից և ինքս ինձ ասում էի. «Այս մարդը՝ Հոբը, ուներ արդարության այնպիսի չափանիշներ, որոնց մասին մեր օրերում նույնիսկ չենք էլ մտածում: Մինչդեռ Հոբը հաստատում է իր արդարությունն Աստծո առաջ»:

## Մովսեսի օրենքը

Եկեք շարունակենք և դիտարկենք Մովսեսի օրենքը:

Ղևտացիների 19:9–10–ում խոսվում է այն մասին, թե ինչպես էր պետք վարել գյուղատնտեսությունը.

> *«Եվ երբ ձեր երկրի հունձն անեք, քո արտի եզրը մինչև վերջ չհնձե՛ս և քո հունձից ընկած հասկերը չհավաքե՛ս: Քո այգին ճռաքաղ չանես, այգինքն՝ քո այգու ամեն մի ողկույզը չքաղես. դրանք աղքատին և օտարականին պետք է թողնես: Ես եմ ՏԵՐԸ՝ ձեր Աստվածը»:*
>
> *Ղևտացիների 19:9–10*

Այլ կերպ ասած, դուք պետք է ձեր բերքից որոշակի մաս չհավաքեք, լինի դա ցորեն, թե խաղող: Ինչո՞ւ:

*«...դրանք աղքատին և օտարականին պետք է թողնես: Ես եմ ՏԵՐԸ՝ ձեր Աստվածը»:*

Սա Մովսեսի օրենքից էր: Ամեն հրեա, ով հետևում էր այդ օրենքին, պարտավոր էր հոգատարություն ցուցաբերել աղքատի և օտարականի հանդեպ: Դա իր գյուղատնտեսությունը վարելու օրենքի մի մասն էր, իսկ հրեաները գյուղատնտես ժողովուրդ էին:

Եվ Տերն այն եզրափակում է՝ ասելով.

*«Ես եմ ՏԵՐԸ՝ ձեր Աստվածը»:* Ես այն մեկնաբանում եմ հետևյալ կերպ. «Ես հենց այսպիսի Աստված եմ և Ես ուզում եմ, որ դուք Ինձ հենց այնպես ներկայացնեք, որ Ես հոգ եմ տանում աղքատի և օտարականի համար: Այն ձեր կենսակերպի մեջ է դրված և դրա մի մասն է կազմում:

2–րդ Օրինաց 14:28–29–ում խոսվում է այն տոնակատարության մասին, որը տեղի է ունենում ամեն 3 տարին մեկ: Խոսելով Իսրայելի ողջ ժողովրդին՝ ասվում է.

*«Ամեն երրորդ տարվա վերջում դուրս բերես քո նույն տարվա բերքի ամբողջ տասանորդը և դնես քո դռների շեմին: Եվ ղևտացին, որ քեզ*

*հետ բաժին ու ժառանգություն չունի և քեզ մոտ եղող օտարականը, որբը և որբևայրին գան և ուտեն, կշտանան, որպեսզի քո ՏԵՐ Աստվածը քեզ օրհնի քո ձեռքով արված բոլոր գործերի մեջ»:*

Ղևտացին էր այն մեկը, ով ծառայում էր Աստծուն և չուներ որևէ ժառանգություն, որովհետև նրա ժառանգությունը Աստծո ժողովրդի արած նվիրաբերումն էր: Այսօր մեր հասարակության մեջ ղևտացին համապատասխանում է միսիոներին կամ ավետարանչին:

*«Եվ ղևտացին, որ քեզ հետ բաժին ու ժառանգություն չունի և քեզ մոտ եղող օտարականը, որբը և որբևայրին գան և ուտեն, կշտանան, որպեսզի քո ՏԵՐ Աստվածը քեզ օրհնի քո ձեռքով արված բոլոր գործերի մեջ»:*

Կարո՞ղ եք տեսնել, թե ում հանդեպ է Աստված հոգ տանում՝ օտարականներ, որբեր և այրիներ: Նա այն մտցրել է օրենքի մեջ: Իսրայելացին չի կարող Մովսեսի օրենքին հետևել՝ խուսափելով հոգ տանել օտարականներին, որբերին և այրերին:

Եվ ապա Աստված ասում է, որ Նա է «քո ՏԵՐ Աստվածը»: Այլ կերպ ասած, Նա ասում է. «Հենց այդպես եմ Ես մտածում, դա է Իմ բնավորությունը, և հենց այդպես է, որ ուզում եմ Ինձ ներկայացնեք մարդկանց»:

# Մարգարեները

Այժմ մենք մոտենում ենք մարգարեներին, և ես ձեր ուշադրությանը կներկայացնեմ Սուրբ Գրքում թեմային վերաբերող մի շարք հատվածներից ընդամենը մի քանիսը: Ուսումնասիրելով մարգարեներին տարիներ շարունակ՝ եկել եմ որոշակի եզրակացության: Պարզապես կկիսվեմ դրանց մասին ձեզ հետ, և դուք կարող եք ինքներդ ձեզ հարցնել, թե արդյոք համաձա՞յն եք:

Կարծում եմ, որ եթե դուք կարդաք մարգարեների գրքերը՝ սկսած Եսայիից և նրանից հետո, ըստ էության, դուք կտեսնեք, որ 3 մեղք կար, որոնք առաջ բերեցին Աստծո զայրույթը: Առաջինը՝ կռապաշտությունն էր, երկրորդը՝ շնությունը (ամուսնական դավաճանություն՝ բառացի թարգմ.) և երրորդը՝ աղքատների հանդեպ անտարբերությունը: Տարիներ շարունակ ազատագրության ծառայության մեջ հանդիպելով շատ մարդկանց՝ ուսումնասիրել եմ, որ եթե մարդիկ կռապաշտության մեջ ընկնեն, ապա դրան շատ հաճախ կհետևի շնությունը: Այլ խոսքերով, հոգևոր դավաճանությունը տանում է դեպի ֆիզիկական դավաճանության: Եվ ես բազմիցս տեսել եմ այդ:

Մեզ բոլորիս ցնցում և հուզում են կռապաշտությունը և շնությունը: Բայց ի՞նչ եք կարծում այն

երրորդ մեղքի մասին, որ Աստված դնում է նույն մակարդակի վրա: Աղքատների հանդեպ անտարբերություն: Ահա թե ինչ է Նա ասում.

*«Լվացվեցե՛ք, մաքրվեցե՛ք, հեռացրե՛ք ձեր գործերի չարությունն Իմ աչքերի առջևից, դադարեցե՛ք չարություն գործելուց, սովորեցե՛ք բարություն անել, որոնեցե՛ք իրավունքը, փրկեցե՛ք զրկվածներին, որբի դա՛տը պեսեք, որբևայրու իրավունքը պաշտպանեցե՛ք»:*

*Եսայու 1:16–17*

Ո՞վ է Աստծո ցուցակի մեջ առաջին տեղը զբաղեցնում: Որբերը և այրիները: Վերը նշվածը չկատարելը կամ կատարել չկարողանալը Աստված համարում է նույնը, ինչ կռապաշտությունը և շնությունն է: Մի փոքր ուշ, խոսելով այն ժամանակների ժողովրդի առաջնորդների մասին, Աստված ասում է Իսրայելին.

*«Իշխաններդ ապստամբներ և գողերի ընկերներն են, բոլորն էլ կաշառք են սիրում և վարձի ետևից են ընկել: Որբի դատը չեն պեսնում ու որբևայրու իրավունքը չի գալիս նրանց առջև»:*

*Եսայու 1:23*

Որբերին պաշտպանել չցանկանալը մտնում է

նույն կարգի մեջ, ինչ կռապաշտությունը և շնությունը: Մեզանից յուրաքանչյուրն ունի մեղքերի իր սեփական փոքրիկ ցանկը, բայց դրանք շատ անավարտ ցուցակներ են: Ես երկար ժամանակ եղել եմ հոգեգալստական եկեղեցու մեջ և շատ հիանալի քարոզներ եմ լսել: Բայց երբեք չեմ լսել մի քարոզ, որը պարզորեն սահմանում է մեր պատասխանատվությունը՝ որբերին և որբևայրիներին հոգալու մասին: Ոչ մի անգամ 58 տարվա ընթացքում:

Երբ այն իսկապես ապշեցրեց ինձ, ես ինքս ինձ ասացի. «Ինչպե՞ս է պատահել, որ այս բոլոր տարիների ընթացքում եղել եմ քարոզիչ և ոչ մի անգամ չեմ նկատել սա»: Անձնական փորձառությանս մասին ձեզ կպատմեմ մի փոքր ուշ:

Շարունակելով այս թեման՝ Եսայու 11–րդ գլխում կտեսնենք, որ Հիսուսի՝ որպես Մեսիայի մասին մարգարեություն կա:

*«Եվ Հեսսեի բնից մի գավազան պիտի դուրս գա, մի Ճյուղ պիտի ընձյուղվի նրա արմատներից. և ՏԻՐՈՋ Հոգին նրա վրա պիտի հանգչի՝ իմաստության և հասկացողության Հոգին, խորհրդի և զորության Հոգին, գիտության և ՏԻՐՈՋ երկյուղի Հոգին: Նրա հաճույքը Տիրոջ երկյուղն է. նա ըստ իր աչքի տեսածի չի դատելու և ոչ էլ ըստ իր ականջի լսածի հանդիմանելու, այլ արդարու-*

*թյամբ պիտի դատի աղքատներին և երկրի հեզերի համար ուղղությամբ պիտի հանդիմանի»:*

*Եսայի 11:1–4*

Ու՞մ մասին էր մտահոգված Հիսուսը: Աղքատների, հեզերի, ընկճվածների և բոլոր այն մարդկանց, ովքեր անարդար վերաբերմունքի էին արժանանում:

Անձամբ ես ծագումով բրիտանական բարձր հասարակության արտոնյալ խավից եմ: Չեմ պատրաստվում խոսել այն մասին, թե ինչ չեմ ստացել, քանի որ ստացել եմ ավելին, քան կարող էի ստանալ: Բայց ես եկել եմ այն եզրակացության, որ այս երկրում մարդկանց մեծամասնությունը չի ստանում այն, ինչ պիտի ստանար: Դա կարող է ձեզ ցնցել, բայց ես կարծում եմ, որ հենց այդպես էլ կա: Սրա հիմնական պատճառը մարդկության եսասիրությունն է: Ամեն մարդ իր մասին է մտահոգվում: Գիտե՞ք, որ կարող եք լինել Սուրբ Հոգով մկրտված և միևնույն ժամանակ շատ եսասեր: Կարող եք այլ լեզուներով խոսել և լինել շատ եսակենտրոն՝ կենտրոնացած ինքներդ ձեզ վրա: Ես հավատում եմ այլ լեզուներով խոսելուն: Ես խոսում եմ լեզուներով ամեն օր, բայց դրանով հանդերձ իմ բնավորությունը կարող է չփոխվել:

Եսայի 58–ը այն հատվածն է, որը Դավիթ Ուիլ-

քերսոնն անվանում է «Բանալի՝ շարունակական արթնության համար»: Նրա ծառայության վիճակագրությունը լիովին հաստատում է իր պնդումը:

*«Մի՞թե այսպիսի ծոմապահություն եմ Ես ընտրել մարդու համար՝ իր անձը խոնարհեցնելու մի օր»:*

*Եսայի 58:5*

Հավատում եմ ծոմապահությանը: Հիմնականում ես ծոմ եմ պահում ամեն շաբաթ: Չեմ ընդունում այն, որ ծոմապահությունը կարևոր չէ, բայց Աստված ասում է, որ ծոմն ավելին է, քան պարզապես ուտելիքից իրեն զսպելը:

*«Այլապես Իմ հավանած ծոմապահությունը՝ անիրավության կապանքները քանդել, ծանր բեռները վերցնել, ճնշվածներին ազատ արձակել ու ամեն փեսակ լուծ կոտրել»:*

*Եսայի 58:6–7*

Արդյոք մենք մեղավո՞ր ենք, որ չենք նկատում այն մարդկանց, ովքեր մեր կարիքն ունեն: Գիտե՞ք, թե ինչ է արվարձանը: Դա մարդկային խղճից փախչելու մի վայր է: Միացյալ Նահանգներում մեծամասամբ գլխավոր մեծ քաղաքներում աղքատները (հիմնականում սևամորթները) տեղափոխվում

էին քաղաքի կենտրոնական մաս, և ապրելակերպի մակարդակը իջնում էր: Միևնույն ժամանակ հարուստները տեղափոխվում էին արվարձաններ:

Ինչպե՞ս կարելի է բացատրել դա: Ես կարծում եմ, որ այն սեփական ժողովրդից թաքնվելու ցանկություն է՝ խուսափելով ժողովրդի կարիքի հետ դեմ առ դեմ բախվելուց:

Այնուհետև հետևյալ հիանալի խոստումն է գալիս.

*«Երբ մի մերկ տեսնես, հագցրու՛. և քո ազգականից երես մի՛ դարձրու: Այն ժամանակ քո լույսն այգաբացի պես պիտի ծագի, և քո ապաքինումը շուտով պիտի գա, քո առջևից քո արդարությունը պիտի գնա, իսկ ետևից ՏԻՐՈՋ փառքը պիտի պահպանի քեզ: Այն ժամանակ պիտի կանչես, և ՏԵՐԸ պիտի պատասխանի. պիտի աղաղակես, և Նա պիտի ասի՝ «Այստեղ եմ Ես»:*

*Եսայի 58:7 –9*

Ահա և պատասխանված աղոթքի երաշխիքը: Բայց սա այն պայմանով է, որ դուք հոգ տանեք այն մարդկանց համար, ովքեր կարիքի մեջ են. *«Քո ազգականից երես մի՛ դարձրու»*:

Կրթությունս ստացել եմ Իթոնում, ապա Քեմբրիջում, որտեղ հայտնվել էի հասարակության այն-

պիսի մի խավի մեջ, որը պարզապես չէր ընդունում, որ շրջակայքում կային մարդիկ, ովքեր օգնության կարիք ունեին: Այնպես չէր, որ մենք նրանց դեմ էինք, պարզապես մենք շատ անտարբեր էինք նրանց նկատմամբ: Հետո 1940թ. ինձ զորակոչեցին բրիտանական բանակ: Ես հանկարծակի բախվեցի այնքան շատ մարդկանց հետ, որոնց գոյության մասին անգամ չգիտեի: Դա հատկապես վերաբերվում էր Ջեորդի մարզի մարդկանց, որոնց ես շատ սիրում եմ: Նրանք այնքան սրտակից մարդիկ են: Բայց երբ գնացի բրիտանական բանակ, ես չէի կարող հասկանալ իրենց, և նրանք էլ ինձ չէին կարող հասկանալ: Բառացիորեն մենք ընդհանուր լեզու չէինք գտնում՝ հաղորդակցվելու համար: Եվ ես սկսեցի հայտնաբերել, որ Բրիտանիայում կային տարբեր տեսակի մարդիկ, որոնց մասին ես երբևէ չէի իմացել: Նրանց մասին ես ոչինչ չեմ գիտեցել: Ես բախվեցի իմ սեփական բնավորության շատ կողմերի հետ, որոնք անհրաժեշտ էին փոխել: Գիտակցեցի, որ ես անտեսել եմ իմ ազգակիցներին: Ես հնարավորություն ունեի ընտրելու կյանքի հեշտ ուղի: Բայց ավելի ուշ ես կպատմեմ ձեզ, թե ինչպես այն փոխվեց:

# Սոդոմի մեղքերը.

Այժմ մի պահ ուզում եմ խոսել Սոդոմի մասին: Շատերը մտածում են, որ գիտեն, թե որն է եղել Սոդոմի իրական մեղքը: Դա եղել է միասեռականությունը, այնպես չէ՞: Բայց դա այն մեղքը չէր, որի պատճառով Աստված դատեց Սոդոմին: Ինձ զարմացրեց այն հայտնությունը, որ ես ստացա: Եզեկիել 16–ը հասցեագրված է Երուսաղեմ քաղաքին, բայց այնտեղ Երուսաղեմը համեմատվում է Սոդոմի հետ: Եվ ահա թե ինչ է Տերն ասում Սոդոմին.

*«Ահա քո քրոջ՝ Սոդոմի անօրենությունն այս էր՝ հպարտություն, հացի կշտություն և անհոգ ծուլություն կար իր ու իր աղջիկների մեջ, բայց աղքատի ու կարիքավորի ձեռքը չզորացրին»:*

*Եզեկիել 16:49*

Միասեռականության մասին ոչ մի հիշատակում չկա: Ի նկատի չունեմ այն, որ Աստված անտարբեր է միասեռականության նկատմամբ, բնավ այդպես չէ: Բայց Սոդոմի հիմնական մեղքերն էին եսասիրությունը, քմահաճությունը, սեփական մարմնի ցանկությունների բավարարումը և «թիվ 1»–ը լինելու ձգտումը: Եվ գիտե՞ք, թե ինչին եմ ես հավատում: Սա պարզապես իմ կարծիքն է, բայց ես հավատում եմ,

որ այդ տեսակի մշակույթը միշտ առաջ կբերի միասեռականություն:

Ահա թե ինչու այսօր աշխարհում ունենք այդքան շատ միասեռականներ, որովհետև մեր օրերի մեղքերը ճիշտ նման են Սոդոմի մեղքերին: Եկե՛ք նորից կարդանք դրանց մասին.

*«Ահա քո քրոջ՝ Սոդոմի անօրենությունն այս էր՝ հպարտություն, հացի կշտություն և անհոգ ծուլություն կար իր ու իր աղջիկների մեջ, բայց աղքատի ու կարիքավորի ձեռքը չզորացրին»:*

*Եզեկիել 16:49*

Ի՜նչ լավ է այս հատվածը նկարագրում մեր արդի հասարակությունը: Իհարկե, կան շատ հիանալի բացառություններ, բայց դրանք ընդամենը բացառություններ են: Մենք կարող ենք հառաչել միասեռականության աճի համար, բայց ես վստահ եմ, որ նման հասարակությունը միշտ առաջ կբերի միասեռականություն, սեփական մարմնի ցանկությունների բավարարում, այլոց հանդեպ անտարբերություն:

## Նոր Կտակարանում

Եկե՛ք անդրադառնանք Նոր Կտակարանին, Ղուկասի ավետարանին: Եվ նորից ուզում եմ ասել, որ այն, ինչ ինձ համար պարզ դարձավ (այլ կերպ

ասած՝ այն հայտնությունը, որը ես ստացա), այնքան ինձ զարմացրեց, որ ես ստիպված էի ինքս որոշելու, թե ինչ էի անելու դրա հետ: Եվ ես դեռ չեմ որոշել: Դա Հովհաննես Մկրտչի ծառայության մի մասն է, ով, ինչպես գիտեք, ուղարկված էր՝ լինելու Հիսուսի ճանապարհը պատրաստող ավետաբերը: Նրա ծառայության իմաստն ամփոփվում է մեկ բառով՝ ապաշխարություն: Ղուկասի ավետարանի 3–րդ գլխում Հովհաննեսն ասում է հետևյալը.

> *«Եվ հիմա էլ կացինը ծառերի արմատին է դրված, ուստի ամեն մի ծառ, որ բարի պտուղ չի տալիս, կկտրվի ու կրակը կնետվի»:*
>
> *Ղուկաս 3:9*

Ուշադրություն դարձրեք, որ Աստված պահանջում է բարի պտուղ: Բավական չէ ասել, որ դուք վատ պտուղ չեք բերում, կամ որ դուք ոչ մի վատ բան չեք անում: Բայց արդյոք բերո՞ւմ եք բարի պտուղ: Քանի որ եթե դուք չեք բերում բարի պտուղ, ապա կկտրվեք և կրակի մեջ կնետվեք: Ուշադրություն դարձրեք, որ սա ուղղված չէ մարմնավաճառներին կամ մաքսավորներին, այլ բոլորին: Բոլորը լսեցին նրա ուղերձը:

«Եվ ժողովուրդը հարցրեց նրան, ասելով. «Ուրեմն ի՞նչ անենք»: Նա պատասխանեց ու ասաց.

*– Ով երկու հանդերձ ունի, թող մեկը պա՛ չունեցողին և ով կերակուր ունի, թող նա էլ այդպես վարվի»:*

*Ղուկաս 3:10–11*

Սա ոչ բարդ է, ոչ էլ աստվածաբանական հարց, պարզապես պետք է հոգալ այն մարդկանց համար, ովքեր ձեր կարիքն ունեն: Երբ կարդացի այս հատվածը, ես մտովի պատկերացրեցի իմ բոլոր կոստյումները և ժակետները, որոնք ունեմ տարբեր երկրներում, տարբեր սենյակների զգեստապահարաններում կախված: Եվ ես ինքս ինձ մտածեցի, որ ես այդ ամենի կարիքը չունեմ: Այնպես չէ, որ ես ագահ եմ և հագուստ եմ դիզում: Պարզապես դրանք ինչ–որ կերպ հավաքվել են: Տարվա տարբեր ժամանակներին ես 3 տարբեր երկրներում եմ ապրում և այդ պատճառով կուտակվել են: Բայց ես ինքս ինձ մտածեցի, որ իմ կյանքում ես երբեք չեմ վարվել այս խոսքին համաձայն:

Եթե դուք ունեք 2 ժակետ, և ինչ–որ մեկը չունի ոչ մի հատ, ի՞նչ կանեք: Տվեք այն նրան: Եթե դուք կերակուր ունեք, և ինչ–որ մեկը ոչինչ չունի ուտելու, ի՞նչ կանեք: Տվեք նրան ուտելիք: Այսպիսով, մեզ պարզ դարձավ, թե ինչի մասին է գնում խոսքը:

Ապա Ղուկասի ավետարանի 14–րդ գլխում Հիսուսը տալիս է հրահանգներ: Նրան հրավիրեցին

փարիսեցու տանը ճաշելու: Ճաշի վերջում նա այդ փարիսեցուն տվեց այս խորհուրդը.

*«Իսկ իրեն հրավիրողին էլ ասաց.*

*– Երբ ճաշ կամ ընթրիք ես պատրաստում, մի՛ կանչիր բարեկամներիդ, եղբայրներիդ, ազգականներիդ և ոչ էլ հարուստ հարևաններիդ: Չլինի թե փոխարենը նրանք էլ քեզ հրավիրեն, և քեզ հատուցում լինի: Այլ, երբ հացկերույթ անես, կանչի՛ր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին: Ու երանելի կլինես, քանի որ փոխարենը հատուցելու ոչինչ չունեն. քո հատուցումը կստանաս արդարների հարության ժամանակ»:*

*Ղուկաս 14:12–14*

Այս հայտարարությունը վերաբերում է բոլոր քրիստոնյաներին: Երբ դուք խնջույք եք կազմակերպում, ո՞ւմ եք պատրաստվում հրավիրել. ձեր ընկերների՞ն, հարազատների՞ն, թե՞ այն մարդկանց, ովքեր, իրոք, հրավերքի կարիք ունեն և չեն կարող ձեզ նույն կերպ պատասխանել: Ուզում եմ, որ դուք հասկանաք, որ ամբողջ Աստվածաշնչում այս միտքը հետևողական է: Այս մասին Աստվածաշնչում պարզապես մի տեղ չէ, որ հանդիպում ենք: Ես զարմա-

ցած եմ, որ այդքան երկար ժամանակ ուսումնասիրել եմ Աստվածաշունչը և երբեք այդքան պարզ չէի հասկացել այն, ինչը հասկացա վերջին մի քանի շաբաթների ընթացքում:

1957թ., երբ ես ապրում էի Ուեսթբուրն Գրոուվ 77–ում, գիշերը ժամը 2–ին Տերն ինձ արթնացրեց և պարզ լսելի ձայնով խոսեց հետս: Կարող էի ձեզ ցույց տալ այն տեղը, որտեղ ես էի գտնվում և այն տեղը, որտեղ Տերն էր կանգնած՝ չնայած որ ես Նրան չէի տեսնում:

Ահա թե ինչ ասաց Նա. «Մեծ արթնություն կլինի Միացյալ Նահանգներում և Մեծ Բրիտանիայում»: Եվ ես ուշադրություն դարձրեցի, թե ինչքան քաղաքավարի էր Տերը: Նա ամենքին կոչում է ճիշտ անվանումով. Միացյալ Նահանգներ և Մեծ Բրիտանիա: Ոչ թե պարզապես «Բրիտանիա», այլ «Մեծ Բրիտանիա»: Հավատում եմ, որ այդ արթնությունը շատ մոտ է: Արթնությունը շուտով կգա, ոչ թե նրա համար, որ մենք արժանացել ենք, բայց որովհետև Աստված որոշեց ուղարկել այն: Հետո Նա ինձ սա ասաց (և ես շատ հազվադեպ եմ խոսում այս մասին, բայց զգում եմ, որ Աստված է ուզում, որ խոսեմ). «Դու կլինես Նրա գործիքը Մեծ Բրիտանիայում, բայց մի պայմանով՝ հնազանդություն փոքր և մեծ բաների մեջ, քանի որ փոքր բաներն էլ այնքան մեծ են, ինչքան բոլոր մեծ բաները»:

Ես իսկապես վստահ եմ, որ այս խոսքը, որը Տերը խոսեց ինձ, հանդիսանում է այն բանալին, որով կարելի է բացել արթնության դռները Մեծ Բրիտանիայում: Դուք տեսել եք հազարավոր հրաշալի քրիստոնյաների, ովքեր պարզապես նստում են եկեղեցու աթոռներին և երգում հիմներ: Իսկ ի՞նչ կասեք բոլոր այն մարդկանց մասին, ովքեր, իրոք, ձեր կարիքն ունեն: Դուք նույնիսկ չեք շփվում նրանց հետ, միգուցե միայն մի քանիսը: Եթե ձեզ այսօր ասեին, որ ձեր տուն հրավիրեք աղքատներին, հաշմանդամներին, կաղերին և կույրերին, ապա դուք չէիք իմանա ում հրավիրել: Դուք այնքա՜ն հեռացած եք նրանցից, ուղղակի շփման մեջ չեք նրանց հետ: Բայց նրանք այն մարդիկ են, ովքեր ձեր կարիքն ունեն:

Մատթեոսի ավետարանի 25–րդ գլխում մենք գտնում ենք ոչխարների և այծերի մասին մարգարեական առակը: Մենք չենք կարող մանրամասնորեն խորանալ սրա մեջ, բայց այն նկարագրում է աշխարհի վերջը: Երբ Տերը հաստատի Իր թագավորությունը, Նա կդատի ազգերը և կբաժանի 2 դասի՝ ոչխարներ և այծեր: Ոչխարներին Նա կկանգնեցնի Իր աջ կողմում, իսկ այծերին՝ ձախ կողմում: Ոչխարներին Նա կհրավիրի Իր թագավորության մեջ, իսկ այծերին ամբողջովին կմերժի: Այծերի համար Նա կարտաբերի ամենասարսափելի

բառերից մի քանիսը, որ երբևէ դուրս են եկել Նրա շուրթերից.

*«Այն ժամանակ ձախ կողմում եղողներին պիտի ասի.*

*– Հեռացե՛ք Ինձանից, անիծյալնե՛ր, հավիտենական կրակի մեջ, որը պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար»:*

*Մաթևոս 25:41*

Որքան ահավոր է նման բառերը լսել Տիրոջ բերանից:

Հավերժական կրակը երբեք նախատեսված չի եղել մարդկության համար, բայց սատանան այլընտրանք չունի: Դա այն տեղն է, որտեղ նրա վերջն է լինելու: Մեր վերջն այնտեղ չի լինելու: Մենք ընտրություն ունենք: Ապա Հիսուսն ասում է նրանց դատվելու պատճառը.

*«...որովհետև սոված էի, և չկերակրեցիք, ծարավ էի, և ջուր չտվեցիք, օտարական էի, և Ինձ ներս չառաք, մերկ էի, և Ինձ չհագցրիք, հիվանդ էի և բանտի մեջ, և Ինձ չայցելեցիք»:*

*Այն ժամանակ նրանք էլ պիտի պատասխանեն նրան՝ ասելով.*

*– Տե՛ր, Քեզ ե՞րբ տեսանք սոված, կամ ծարավ, կամ մերկ, կամ հիվանդ, կամ բանտի մեջ և Քեզ ծառայություն չարեցինք:*

*Եվ նա պիտի պատասխանի նրանց ու ասի.*

*– Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ սրանց ամենափոքրերից մեկին չարեցիք՝ Ինձ չարեցիք»:*

*Մատթեոս 25:42–45*

Հիշեք, որ մենք կարող ենք ընկնել հավերժական դատապարտման տակ այն բաների համար, որոնք չենք արել և ոչ թե այն բաների համար, ինչ արել ենք: Աստված չդատեց նրանց այն ամենի համար, ինչ արել էին: Նա դատեց այն ամենի համար, ինչ չէին արել: Սա շատ լուրջ մտածմունք է:

Ժամանակակից արևմտյան (քրիստոնեականացված) հասարակության մասին իմ անձնական կարծիքն այն է, որ մենք պիտի դատվենք ոչ թե նրա համար, ինչ արել ենք, այլ այն ամենի համար, ինչ չենք արել: Եվ բացառություններ չկան: Մենք դատվելու ենք ոչ միայն մեր գործած մեղքերի համար, չնայած որ դա նույնպես էական է, այլև այն բոլոր բարի գործերի համար, որ չենք արել: Ես Աստվածաշնչում ոչ մի տեղ չեմ կարդացել ավելի սարսափելի բառեր, քան սրանք են. *«Հեռացե՛ք Ինձանից, անիծյալնե՛ր, հավիտենական կրակի մեջ, որը*

*պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար»*:

Այս ամենն ամփոփված է Հակոբոսի ուղերձում, մի քանի համարների մեջ, և այն եզրափակում է Նոր Կտակարանի ուսուցանումը: Գրված է.

> *«Աստծո և Հոր առաջ մաքուր և անարատ կրոնն այս է՝ որբերին և որբևայրիներին այցելել նրանց նեղության մեջ, և իր անձն անբիծ պահել աշխարհից»:*
>
> *Հակոբոս 1:27*

Լինելով հին հոգեգալստական, ես լսել եմ շատ–շատ քարոզներ՝ աշխարհին նման չլինելու մասին: Բոլոր քարոզները դեմ էին աշխարհիկ կյանքը սիրելուն և բոլոր այն բաներին, որոնք դասակարգվում էին որպես ունայնություն: Բայց ես երբեք չեմ լսել մի քարոզ, որը վերաբերվում էր մեր պատասխանատվությանը որբերի և այրիների հանդեպ: Երբե՞ք: Իմ օրերում ես լսել եմ շատ հրաշալի քարոզներ: Բայց Հակոբոսն ասում է, որ սա է մաքուր և անարատ բարեպաշտությունը Աստծո և Հոր առաջ:

Այս համարի ժխտողական կողմը հետևյալն է. *«...իր անձն անբիծ պահել աշխարհից»*: Սակայն սրան նախորդում է դրական հատվածը. *«...որբերին և որբևայրիներին այցելել նրանց նեղության մեջ»*:

Արդյոք կիրառո՞ւմ եք այդ տեսակ բարեպաշտու-թյուն ձեր կյանքերի մեջ: Եթե ոչ, ապա ո՞վ է ազատել ձեզ այդ պարտականությունից: Ո՞վ որոշեց, որ դուք սրա մեջ ներգրավված չեք: Ես ձեզ մի բան կասեմ. «Սա վերաբերում է ինձ»:

## Ընդհանուր խոստումներ և զգուշացումներ

Այժմ եկեք դիտենք մի քանի ընդհանուր դրույթներ հիմնականում Առակաց գրքից.

*«Աղքատին ողորմացողը ՏԻՐՈՋՆ է փոխ պալիս, ու ինչ պվել է, Նա նրան կհատուցի»:*

*Առակաց 19:17*

Այսպիսով, երբ դուք աղքատին եք տալիս, ապա պարտք եք տալիս Տիրոջը: Ես ձեզ մի բան կասեմ, որ Տերը միշտ հատուցում է: Նա երբեք պարտական չի մնում: Ինչքա՞ն եք տվել: Կանգ առեք և ինքներդ ձեզ հարց տվեք: Դուք տասանո՞րդ եք տալիս: Հրաշալի է, բայց դա միայն սկիզբն է: Իհարկե, դա շատ կարևոր սկիզբ է, բայց դա դեռ ամեն բան չի նշանակում:

Շատ երջանիկ եմ մտածելու այն մասին, թե ինչ եմ տվել աղքատներին: Ես չեմ պնդում, որ ես համարվում եմ մեծ տվող, բայց ես ուրախ եմ, որ

Տերը պատրաստվում է վարձահատույց լինել ինձ: Ես Նրան եմ ապավինում: Ես մարդկանց պարտք եմ տվել, ովքեր չեն վերադարձրել իրենց պարտքը: Եթե դուք էլ եք նույն փորձառությունն ունեցել, ապա միայն Տերն Ինքը կլինի այն Մեկը, ով վարձահատույց կլինի ձեզ: Ահա ձեզ մի խորհուրդ. երբեք ձեր ընտանիքի անդամներին պարտք մի տվեք, այլ պարզապես տվեք:

Առակ 31–ը նկարագրում է այն գերազանց կնոջը, ով նաև օրինակելի մայր է.

*«Ձեռք է մեկնում աղքատին ու կարոտյալին հասնում»:*

*Առակաց 31:20*

Սիրելի՛ ամուսնացած տիկի՛ն, արդյոք այս խոսքերը ձե՞զ են վերաբերում: Դու՛ք պետք է պատասխան տաք, և ոչ թե ես:

Ապա կարող ենք տեսնել 2 զգուշացումներ.

*«Ով աղքատի աղաղակը չլսելու համար փակում է ականջները, երբ ինքն աղաղակի, իրեն էլ լսող չի լինելու»:*

*Առակաց 21:13*

Մի՞թե սա է պատճառը, որ մեր աղոթքներից մի քանիսը չեն պատասխանվում, որովհետև մենք չենք լսել աղքատի աղաղակը: Եթե մենք չենք լսում

աղքատի աղաղակը, Աստված էլ չի լսի մեր աղաղակը:

*«Աղքատին տվողը կարոտություն չի քաշի, բայց աչքաթող անողը շատ անեծքներ պիտի ստանա»:*

*Առակաց 28:27*

Բոլոր նրանց համար, ովքեր ծանոթ են Մերձավոր Արևելքին, այս խոսքերը ճիշտ կթվան: Երբ մուրացկանը ձեռքը պարզի դեպի ձեզ, և դուք նրան ոչինչ չտաք, նա, անիծելով ձեզ, կհեռնի փողոցում: Այդ անեծքները իրականում ունեն որոշակի ուժ, դրանք պարզապես բառեր չեն:

Իմ առաջին կինը ապրել է Երուսաղեմի մարդկանց մեջ՝ խոսելով հիմնականում արաբերեն: Մի անգամ նա գնում էր խանութ հին հունական քաղաքում, և մի մարդ ինչ–որ բան էր ուզում վաճառել նրան, բայց կինս ասում է, որ այն շատ թանկ է ու չի գնում դա: Կինս պատմում է, որ հենց փողոցով ներքև քայլեց, սկսեց սայթաքել և գրեթե ընկնել: Հետո նա հասկացավ, որ այդ խանութի տերն էր անիծել իրեն: Հավատացեք ինձ, թանկագի՛ն քույրեր և եղբայրներ, ձեզ վտանգի չենթարկեք Մերձավոր Արևելքում, եթե դուք չեք հասկանում օրհնությունների և անեծքների զորությունը, քանի որ դրանք, իրոք, ուժ են պարունակում իրենց մեջ:

Ամովսի գրքի 6–րդ գլխում խարիզմատիկ լավ հավաքույթի մի եզրափակիչ պատկեր է նկարագրված: Ամովսի գրքի հիմնական թեման անարդարություն և եսասիրությունն է: Եվ այդ պատճառով է, որ մի ամբողջ ազգ արտաքսվեց Աստծո ներկայությունից:

*«Վա՜յ նրանց, որ չար օրը հեռու են համարում և մոտեցնում բռնության աթոռը, որ պառկում են փղոսկրյա մահիճների վրա և մեկնվում բազմոցների վրա, հոտերից ուլեր են ուտում և զոմերից՝ հորթուկներ, որ խաղ են ասում փավիղի ձայնակցությամբ, Դավթի նման նվագարաններ հնարում իրենց համար: Բաժակներով գինի են խմում և ծանրագույն յուղերով օծվում, բայց ցավ չեն զգում Հովսեփի աղետի համար»:*

*Ամովս 6:3–6*

Մի՞թե այդ նկարագրությունը նման չէ խարիզմատիկ հավաքույթի: Մենք հիանալի ժամանակ ենք անցկացնում: Շատ երաժշտություն կա, մենք ուտում ենք, և մենք, իսկապես, երջանիկ ենք: Բայց չենք մտահոգվում այն մարդկանց համար, ովքեր ոչինչ չունեն: Դա բոլորին չի վերաբերում, բայց շատերին է վերաբերում: Ես չեմ ասում սա, որ դատապարտեմ ձեզ, բայց եթե դուք իրոք ուզում եք, որ Տիրոջ օրհնությունները լինեն

ձեզ և ձեր ազգի վրա, ապա դուք պետք է ինչ–որ բան նախաձեռնեք այս ամենի վերաբերյալ:

## Անձնական տպավորությունները

Հնարավոր է, որ դուք ասեք. «Եղբա՛յր Պրինս, դուք շատ քարոզել եք: Իսկ ի՞նչ եք դուք արել: Այս հարցին ես կպատասխանեմ և ուզում եմ ձեզ ասել, որ ինչ–որ համբավի և պատվի չեմ հասել այս մասին քարոզելու համար: Ես չեմ քարոզել այս թեմայի մասին, որովհետև ես բարի կամ արդար եմ եղել, բայց որովհետև Տերն է ասել, որ անեմ:

Ես ծնվել եմ Հնդկաստանում՝ բրիտանական ընտանիքում, միակ զավակն եմ եղել, կրթվել եմ Իթոնում, ապա՝ Քեմբրիջում: Ինչպես ասում են բրիտանացիները, ես ծնվել եմ «արծաթե գդալը բերանումս»: Հետո դժկամությամբ գնացի բրիտանական բանակ և այդպես հայտնվեցի Մերձավոր Արևելքում: Այնտեղ ես հանդիպեցի դանիացի մի կնոջ՝ Լիդիա անունով, ով նոր բացել էր փոքրիկ մանկատուն: Ես սիրահարվեցի նրան և զգացի, որ Աստված ուզում էր, որ ամուսնանամ նրա հետ:

Աստված նաև Լիդիային էր ասել Իր այն ցանկության մասին, որ մենք պետք է ամուսնանանք: Այդպիսով, երբ ես ամուսնացա նրա հետ, նույն օրը ձեռք բերեցի և՛ կին, և՛ ութ դուստրեր: Հիշեք, որ ես

եղել եմ ընտանիքում միակ զավակը: Երբեք քույր չեմ ունեցել և շատ բան չեմ իմացել կանանց մասին: Երեխաներից 6–ը հրեա էին, մեկը՝ արաբ, և մյուսը՝ անգլիացի:

Մի քիչ կպատմեմ նրանց մասին՝ սկսելով ամենափոքրից: Իմ ամենափոքր դուստրը, ով անգլիացի էր, ամուսնացավ գոանացու հետ, եթե, իհարկե, գիտեք, թե ով է գոանացին: Գոանացին մի մարդ էր Գոայից, որը հնդկական շրջան է: Նա ունի 2 երեխա՝ մի տղա և մի աղջիկ: Դուստրս ինձ պարգևեց 2 թոռնիկ:

Հետո իմ արաբ դուստրը ամուսնացավ անգլիացու հետ: Նա ունի 3 երեխա և 1 թոռնիկ: Այդպիսով, նա ինձ պարգևեց 3 թոռնիկ և 1 ծոռնիկ:

Բայց այժմ սպասեք գագաթնակետին: Իմ հրեա դուստրերից մեկը՝ Մագդալն ամուսնացավ այրի տղամարդու հետ, ով ավետարանի ծառայող էր: Նա արդեն իր կնոջից ուներ 6 երեխա, և Մագդալն էլ ունեցավ 5 երեխա: Եվ այդպիսով նա ինձ պարգևեց 11 թոռնիկ: Մագդալն ունի 28 թոռնիկ, իսկ ես ունեմ 28 ծոռնիկ: Եվ դա դեռ վերջը չէ: Մենք կարող ենք 2 սերունդ էլ առաջ գնանք: Այնպես որ ես առանց փորձառության չեմ ապրել:

Դուք կարող եք ասել. «Դե՛ լավ, իսկ դուք ի՞նչ եք արել»: Ես իսկապես չեմ կարող այն վերագրել ինձ, բայց նախ և առաջ, ես սիրեցի կնոջս, և հետո սիրեցի ընտանիքս: Այդ ընտանիքից, որը 1928թ.–ին սկսվեց

մի հուսահատության աստիճանի հիվանդ հրեա երեխայից, հիմա մի ընտանիք է գոյացել, որը բաղկացած է ավելի քան 150 անդամներից: Այն տարածվել է ամբողջ աշխարհով, Իսրայելից մինչև Բրիտանիա, Կանադա, Միացյալ Նահանգներ, Ավստրալիա: Բայց ամենազարմանալին և հրաշալին այն է, որ մենք, իրոք, մեկ ընտանիք ենք: Մեզանից ամեն մեկը կիամաձայնի սրա հետ: Մենք երբեք չենք բաժանվել: Մենք երբեք չենք անջատվել: Եվ դա Աստծո շնորհքն է: Եվ ես այն ինձ չեմ վերագրում, այլ տալիս եմ ողջ փառքն Աստծուն:

Սկզբնականորեն ես ձեռք բերեցի 8 երեխա իմ առաջին ամուսնությունից: Ապա ես և Լիդիան գնացինք Աֆրիկա՝ Քենիա, այնտեղ կրթական աշխատանք կատարելու: Մոտ 5 տարի ես եղել եմ աֆրիկական դպրոցների համար աֆրիկայի ուսուցիչների վերապատրաստումների վարժարանի տնօրեն:

Մի օր՝ երեկոյան ժամը 5–ի մոտ, փոքր–ինչ տարօրինակ խառնամբոխ՝ սպիտակամորթ մի կնոջ հետ, ով գրկել էր փոքրիկ սևամորթ երեխայի՝ փաթաթված կեղտոտ սրբիչով, և սևամորթ աֆրիկացի մի զույգ, անակնկալ կերպով հայտնվեց մեր տանը: Նրանք ասացին. «Այս փոքրիկ երեխայի մայրը մահացել է ծննդաբերելու ժամանակ: Երեխային գտել էին աֆրիկական խրճիթի հատակին:

Ինչ–որ մեկը վերցրել էր նրան և տարել հիվանդանոց, որտեղ նա մնացել էր 6 ամիս: Եվ հիմա հիվանդանոցում ասում են, որ այն մանկատուն չէ և չեն կարող երեխային պահել: Եվ մենք 3 օր շարունակ փնտրում էինք ինչ–որ մի ընտանիք՝ աֆրիկական, ասիական կամ եվրոպական, որը կվերցներ երեխային իր խնամքի տակ: Մենք գնացինք միսիոներական հիվանդանոց, այնտեղ մեզ ասացին, որ իրենք չեն կարող վերցնել երեխային, բայց ավելացրեցին, որ Պրինսների ընտանիքը վերցնում է երեխաների»:

Այդ էր պատճառը, որ նրանք եկել էին մեզ մոտ:

«Բայց դա եղել է շատ շուտ: Մենք հիմա դրանով էլ չենք զբաղվում: Մենք ունենք մեր սեփական աշխատանքը, որը մեզ զբաղված էր պահում առավոտից մինչ գիշեր»:

«Մենք այնքան հոգնած ենք,– ասացին իրենք,– թույլ կտա՞ք նստենք»: Եվ մենք նրանց առաջարկեցինք, որ նստեն և մի բաժակ ջուր տվեցինք, որ խմեն: 15–20 րոպե անց նրանք վեր կացան գնալու: Երբ սպիտակամորթ կինը իմ կողքով անցավ, նա մի պահ կանգ առավ՝ առանց որևէ հատուկ պատճառի: Եվ այդ պահին փոքրիկ սևամորթ երեխան իր ձախ ձեռքը դուրս հանեց և իմ կողմը պարզեց՝ կարծես ասելով. «Եվ ի՞նչ եք անելու ինձ հետ»: Ես նայեցի կնոջս, ով սենյակի ճիշտ հակառակ կողմում էր

կանգնած: Սովորաբար նման իրավիճակներում՝ ինչ–որ բան որոշելուց առաջ, մենք միշտ աղոթում ենք: Եվ օրհնելով երեխային՝ Լիդիան ասաց. «Տվեք ինձ մի շաբաթ ժամանակ, որպեսզի մանկական մահճակալ և մանկական որոշ հագուստ ձեռք բերեմ, և այդ ժամանակ դուք կարող եք նրան հետ բերել»: Եվ այդպես մենք ձեռք բերեցինք 9–րդ երեխային:

Ավելի ուշ, երբ ես ամուսնացա Հռութի հետ, ձեռք բերեցի ևս 3 հրեա երեխա, որոնց Հռութը և նրա առաջին ամուսինը որդեգրել էին: Այդպիսով, ես ունեցա 12 երեխա՝ 11 աղջիկ և 1 տղա:

Ես առաջ Հռութին միշտ ասում էի . «Դու չես կարող դժգոհել, որ մեր կյանքը ձանձրալի է»: Եվ այն երբևէ ձանձրալի չի եղել: Այն ժամանակից ի վեր, ինչ ես եկա Տիրոջը և ճանաչեցի Նրան, երբեք չեմ ունեցել մռայլ կյանք: Ես հանդիպել եմ մարտահրավերների և հնարավորությունների, և՛ կարիքների, որոնց մասին ես պատկերացում անգամ չէի կարող ունենալ: Եվ ահա ես 84 տարեկան եմ և դեռ շարունակում եմ ընթանալ առաջ:

## Ձեր արձագանքը

Հիմա հարց է հասունանում. եթե դուք հավատում եք, որ իմ ասածը ճշմարտություն է, ապա ի՞նչ եք պատրաստվում անել: Պատրաստվո՞ւմ եք ինչ–որ

բան ձեռնարկել: Թույլ տվեք ինձ կիսվել ձեզ հետ, թե ինչ է կարող անել մեզանից յուրաքանչյուրը: Իմ սրտում հատուկ հոգս կա միայնակ մայրերի մասին: Այն բանից հետո, երբ իմ առաջին կինը՝ Լիդիան, ննջեց ի Տեր, ես ամուսնացա Հռութի հետ, ով միայնակ մայր էր՝ 3 երեխաներով: Նրա ամուսինը նրան լքել և դավաճանել էր: Ես ուզում եմ ձեզ ասել, մայրերից շատերը մեծ դժվարություններ են կրում: Ձեզանից շատերը գիտեն իրենց անձնական փորձից:

Ես հավատում եմ, որ եկեղեցին պարտավորություն ունի միայնակ մայրերի հանդեպ: Մի անգամ ես այս մասին ասացի մի եղբոր, ինչին նա պատասխանեց. «Բայց հենց նրանց անձնական մեղքն է բերել նրանց նման ցավագին արդյունքի»: Սա ոչ միշտ է ճիշտ: Անշուշտ այս կանանցից շատերն ամուսնացած չեն եղել, բայց ոչ նրանցից բոլորը: Բայց եթե դա ճշմարիտ էլ լիներ, մի՞թե Հիսուսն արգելել է մեզ օգնել մեղավորներին: Չէ՞ որ նրանք դրա կարիքն ունեն: Բայց նրանցից շատերը ընկել են ծանր կացության մեջ ոչ իրենց մեղքով: Ես հավատում եմ, որ եկեղեցին կարող է մի բարի բան անել միայնակ մայրերի համար: Թույլ տվեք ձեզ ասել, որ իրական բանալին դեպի երջանկություն ոչ թե այն է, որ ձեզ են սիրում, այլ որ ձեր կյանքում կա մեկը, ում դուք կարող եք սիրել: Հենց սա է մեր

կյանքին ուրախություն տալիս: Եվ հավատացեք, որ ձեզանից ոչ հեռու մարդիկ կան, որոնք ձեր սիրո կարիքն ունեն: Հնարավոր է՝ նրանք թույլ չտան, որ իրենց սիրեն: Հնարավոր է՝ նրանք լինեն զայրացած, մի քիչ Աստծո դեմ տրամադրված և չարությամբ լցված ասեն. «Աստված իմ հանդեպ անարդար է եղել, ինչո՞ւ եմ ես նման իրավիճակում հայտնվել»: Բայց ես ևս մեկ անգամ ուզում եմ ընդգծել, եթե դուք ուզում եք երջանիկ լինել, գտեք մեկին, ում դուք կսիրեք: Հենց դա իրականում կփոխի ձեր կյանքը: Հաճելի է զգալ, որ դու սիրված ես: Ինձ շատերն են սիրում: Բայց ես դրան արժանի չեմ: Սակայն իմ սիրտը իսկական ուրախությամբ է լցվում, երբ ես կարող եմ սեր տալ նրանց, ովքեր չեն սիրվել, և ուրախ եմ տեսնել նրանց դեմքերին ժպիտ, երբ նրանք ասում են. «Վերջապես իմ կյանքում էլ հայտնվեց ընկեր»:

Հիշե՛ք, եսասիրությունը թշվառության բանալին է: Դուք կարող եք լինել շատ հոգևոր, իրազեկ մարդ և այնուհանդերձ մնաք բավականին թշվառ: Դրա համար ես նորից ուզում եմ ձեռնոց նետել նրանց, ովքեր արդեն ունեն տուն և ընտանիք: Ձեզանից ոչ հեռու մի տեղ ապրում է միայնակ մի մայր, որին ձեր օգնությունը շատ է հարկավոր:

Օրինակ, կանայք դժվարանում են մեքենա վարել: Ինձ համար էլ այն շատ հեշտ չէ: Մեքենայի

մեջ շատ բաներ կան, որոնցից ես գլուխ չեմ հանում: Իմ բախտը բերել է, որ ես փեսա ունեմ, որը լավ գլուխ է հանում մեքենաներից: Բայց միայնակ կնոջ համար, ով գլուխ չի հանում մեքենայից, որից կախված է նրա գործը, դա կարող է մեծ դժվարություն լինել: Եթե դուք կարող եք օգնել նման կնոջը, դուք միանգամից կունենաք ընկեր: Պետք չէ լինել շատ հավատացյալ կամ հայտարարել, որ դուք ուզում եք նրան ձեռք բերել Տիրոջ համար, այլ միայն ասեք. «Ես տեսել եմ, որ դուք խնդիրներ ունեք, կարո՞ղ եմ ինչ–որ բանով ձեզ օգնել»: Կանցնի ժամանակ, և այդ կնոջ ու նրա երեխաների սրտում փոփոխություններ կլինեն:

Վերջերս ավարտեցի իմ աշխատանքը «Ամուսիններ և հայրեր» գրքի վրա (Իմիջիայլոց այս գիրքն արդեն հասանելի է հայ ընթերցողին հայերեն լեզվով. խմբագրի կողմից): Դրանում ես ախտորոշեցի արևմուտքի հասարակության հիմնական խնդիրները՝ հայրեր, որոնք հետ են կանգնել իրենց հիմնական պարտականություններից՝ որպես ամուսիններ և հայրեր: Դրա արդյունքը հասարակության մեջ քաոսն է: Իհարկե, կարելի է իրականացնել սոցիալական ծրագրեր, բայց ոչ մի բանով հնարավոր չէ փոխարինել Աստծո գործերի ընթացքը: Ընտանիքի անդամ լինելը պատիվ է: Ես ամեն օր շնորհակալություն եմ հայտնում Աստծուն իմ ընտա-

նիքի համար: Ես աղոթում եմ նրանց համար, և նրանք աղոթում են ինձ համար: Ես նույնիսկ անհարմար եմ զգում մտածել, թե քանի հոգի է աղոթում ինձ համար:

Վերջերս ես առողջական խնդիրներ ունեի, ինձ ախտորոշեցին, որ քաղցկեղ ունեմ: Դրա համար ես սկսեցի ստանալ նամակներ ամբողջ աշխարհից, որտեղ ասվում էր, որ մարդիկ և նրանց եկեղեցիները աղոթում են ինձ համար: Ինքս ինձ մտածում էի, որ նման ուշադրությունը պարզապես աներևակայելի է, բայց ես չեմ մերժում այդ ուշադրությունը:

Ես մտածում եմ, որ ժամանակն է, որ դուք դուրս գաք ձեր նեղ կրոնավոր շրջանակներից և ինչ–որ մի համարձակ բան անեք, ինչպես որ ես արեցի: Որքա՞ն տղամարդ կամուսնանար մի կնոջ հետ ու միաժամանակ ձեռք կբերեր 8 դուստրեր: Եվ թույլ տվեք ձեզ ասել, որ դա օգտակար եղավ ինձ համար: Այդ որոշումն ինձ դուրս քաշեց կրոնավոր շրջանակից: Ես հայտնվեցի իրական մարդկանց և իրական խնդիրների մեջ: Ուզում եմ ձեզ հնարավորություն տալ՝ որոշակի պարտավորություններ անելու: Եվ այսպիսով, կարդալով այս գիրքը, գուցե դուք ցանկանայիք այս աղոթքն ասել.

«Տե՛ր, ես իրոք բավարարված չեմ զգում: Ես կարող էի ավելին անել, քան անում եմ: Եվ ճիշտն ասած, ես շատ հարցերում եսակենտրոն եմ: Բայց ես

կուզենայի բաց լինել Քեզ համար, որ սիրեմ նրանց, ովքեր երբեք սիրված չեն եղել և հոգալ նրանց համար, ում ոչ մեկը չի հոգացել»:

Այնուհետև հանձնեք ձեզ Տիրոջն այն նպատակների համար, որ Նա ունի ձեր կյանքի համար, որպեսզի ծառայեք ուրիշներին:

# Ինչ-որ մի բան արե՛ք

## 20 միջոց, որոնցով կարող եք փոփոխություն բերել

Ենթադրենք, որ դուք ինքներդ ձեզ ասում եք. «Ես ինձ վրա պարտավորություն եմ վերցրել, որպեսզի հոգամ որբերին, այրիներին և աղքատներին: Բայց ինչպե՞ս իրականացնեմ դա:

Առաջինը, գնահատե՛ք ձեր ունակությունները՝ ուսուցանելը, կառուցելը, նկարելը, եփելը, լսելը, ֆինանսները կառավարելը և գտեք մի տեղ, որտեղ կարող եք առաջարկել այդ ունակությունները: Կապ չունի, թե դուք «մեկ տաղանդ ունեցող» անձնավորություն եք (մեզանից 80 տոկոսն այդպիսին են): Կարևորն այն է, որ դուք օգտագործեք այդ մեկ տաղանդը՝ ուրիշներին օրհնելու և կարիքի մեջ նրանց ծառայելու համար:

Որոշ քրիստոնյաների համար դեռ դժվարություն է ներկայացնում ծառայել այն մարդկանց, ովքեր իրենք են մեղավորն իրենց անձնական դժբախտության, օրինակ՝ հարբեցողները, միայնակ մայրերը, որոնք երբեք չեն ամուսնացել, կամ անտունները: Խորհե՛նք այն մարտահրավերի մասին, որը վերջերս Դերեկ Պրինսը նետեց, երբ քարոզում էր այս թեմայի շուրջ Թենեսիում գտնվող եկեղեցիներից մեկում.

«Մի՞թե Հիսուսը երբևէ արգելել է մեզ ողորմածություն ցուցաբերել մեղավորների հանդեպ»:

Այս հարցին տրվող պարզ արձագանքներից մեկը հետևյալն է. «Ես պարզապես ժամանակ չունեմ»: Պարզ ճշմարտությունն այն է, որ մենք ժամանակ միշտ գտնում ենք այն ամենի համար, ինչ կարևոր ենք համարում: Շատ քիչ ճանապարհներ կան՝ աղքատներին օգնելու համար, որոնք միաժամանակ նաև հարմարավետ կլինեին: Եթե, իրոք, ժամանակ չունեք՝ նրանց տրամադրելու համար, ապա պարտավորվեք նյութական օժանդակություն ցուցաբերելու նրանց, ովքեր իրենց ժամանակը տալիս են աղքատներին: Հուսով եմ, որ այս գաղափարները կօգնեն ձեզ՝ սկսելու զարգացնել որբերին, այրիներին և բոլոր կարիքավորներին օգնության հասնելու կենսակերպ:

## Եղե՛ք ակտիվ

Գտե՛ք ձեր համայնքում և եկեղեցում արդեն գործող արժանի ծրագրերը և ներգրավվեք դրանց մեջ: Կա՞ն արդյոք եկեղեցիներ, որոնք օգնության են հասնում այդ կարիքավոր մարդկանց սննդամթերք կամ օթևան տրամադրելու ծրագրերի միջոցով: Եթե կան, ապա զանգեք և առաջարկեք ձեր օգնությունը: Տեղեկացեք ձեր տարածքի հեռախոսի բաժանորդ-

ների ցուցակից: Փնտրեք այն խմբերը, որոնք կերակրում են ծերերին կամ իրավական ծառայությունների միջոցներ են ձեռնարկում նրանց համար, ովքեր ի վիճակի չեն դրանց համար վճարելու:

## Մայրիկի օգնական

Փնտրեք ձեր հարևանությամբ կամ եկեղեցում միայնակ մայրիկի: Հիշեք, միայնակ մայրը որբևայրու մի այլ տեսակ է, իսկ իրենց երեխաները՝ որբերի: Առաջարկեք նրան կանոնավոր կերպով իր երեխաներին խնամել այնքան ժամանակ, մինչև նա կկարողանա հանգիստ գնումներ կատարել կամ մի քիչ հանգստանալ միաժամանակ և՛ մայր, և՛ հայր լինելու ճնշումից:

## Նրանց ներս ընդունե՛ք

Բացեք ձեր տունը որբ և անտուն երեխաների համար: Պետության հոգածության ներքո գտնվող հաստատությունների մեծ մասը լի է անցանկալի «հատուկ կարիքով» երեխաներով, որոնք կարոտում են իրենց սիրող ծնողներին:

## Համեղ նախաճաշիկ

Ձեր մեքենայի մեջ կամ ձեզ մոտ պահեք ուտելիքի փոքրիկ պարկ՝ թխվածքների կամ ընկույզների և այլ բաների պարունակությամբ, որպեսզի դրսում ողորմություն խնդրող անտուն մարդկանց բաժանեք:

## «Որդեգրեք» այրուն

Առաջարկե՛ք որբևայրուն իր փոխարեն գնումներ կատարել կամ տարեք նրան ձեր մեքենայով այնտեղ, ուր նա պետք է գնա: Կամ պարզապես նրա հետ ժամանակ անցկացրեք: Հարցրեք նրան իր կյանքի մասին: Դուք կզարմանաք, թե ինչքան շատ բան կսովորեք:

## Հատուկ ծննդաբերություններ

Գտե՛ք եկեղեցիներ ու ծառայություններ, որոնք հոգ են տանում ճգնաժամային հղիությունների համար, օգտվե՛ք նրանց ծառայություններից, որը թույլ կտա ձեզ դաստիարակելու երիտասարդ մայրիկին (կամ ապագա մայրերին): Նոր մայրերը կարիք ունեն քաջալերման և գործնական աջակցության:

## Ուսուցիչ եղե՛ք

Որոշ եկեղեցիներ քաղաքում գտնվող դպրոցների հետ համագործակցող ծրագրեր ունեն, որոնց միջոցով օգնում են երեխաներին սովորել ընթերցանություն և մաթեմատիկա: Հավանաբար, դուք կարող եք շաբաթը մի քանի ժամ նվիրել մի երեխայի, ով ուրիշ եղանակով չի կարող ստանալ այդքա՜ն անհրաժեշտ օգնությունը: Եթե այդ տեսակ ծրագիր չկա ձեր տարածքում, ապա դուք ինքներդ սկսեք այն: Կապ հաստատեք այդ դպրոցի ղեկավարության հետ՝ ուղղություն ցույց տալու համար:

## Խորհրդածե՛ք ծոմի շուրջ

Կարդացե՛ք Եսայա մարգարեի 58–րդ գլուխը և շաբաթը մեկ օր ծոմ պահեք և աղոթք արեք ձեր համայնքի որբերի և այրիների համար: Խնդրեք Աստծուն, որ Նա ձեր ուղիները միավորի, որպեսզի դուք կարողանաք օգնել նրանց:

## Ոսկե տարիները

Ձեր երեխաների հետ այցելեք ծերանոց: Ծերերը հաճախ զրկված են այն կենդանացնող ուրախությունից, որը երեխան պարգևում է անգամ մի

ժպիտով: Զանգեք նախապես և խոսեք տնօրենի հետ, պարզեք, թե որ օրն է ամենալավը այցելության համար և ինչպես կարող եք ընկերություն առաջարկել: Եթե երեխաներ չունեք, դուք կարող եք օգնել ծերերին՝ ակտիվություն ցուցաբերելով: Կամ ինչ–որ մի օր սանրեք ծերերի մազերը և գեղեցիկ ձևով հարդարեք ծեր կանանց վարսերը կամ պարզապես նստեք և զրուցեք:

## Հոգատարություն օրվա ընթացքում

Աշխատող միայնակ մայրիկի երեխայի հանդեպ քնքշությամբ և սիրով լի հոգատարություն ցուցաբերեք:

## Կենսական նշանակություն ունեցող օգնություն կազմակերպեք

Կամավոր կերպով ժամանակ տրամադրեք կամ դրամական միջոցներ նվիրաբերեք ազգային օժանդակություն (օգնություն, նպաստ) ցույց տվող խմբերին: Քանի որ բնական աղետների թիվը աճում է, այս տեսակ կազմակերպությունները հաճախ առաջինն են, որ օգնության են հասնում նրանց, ովքեր մնացել են առանց սննդի և օթևանի:

## Հագցրե՛ք մերկերին

Տվեք ձեր օգտագործած հագուստը կամ կահույքը տեղական խնամողության պահեստ, որի եկամուտն օգնում է այդ կարիքավորներին: Կամ առաջարկեք դրանք ձեր տեղի անտուններին ու ապաստաններին:

## Այցելեք նրանց, ովքեր չեն կարող այցելել ձեզ

Մտեք բանտային ծառայության մեջ: Գտեք մի խումբ, որն այցելում է կանանց բանտեր: Կամ էլ օգնեք ինչ–որ մի բանտարկյալի ընտանիքին:

## Դպրոցական օրեր

«Որդեգրեք» քաղաքում գտնվող դպրոցներից մեկում մի դասարան մեկ տարով: Մոտեցեք դպրոցի ղեկավարությանը կամ տնօրենին և ասեք նրան, որ ուզում եք օրհնել իրենց դպրոցին՝ «որդեգրելով» մի դասարան: Շաբաթը մի անգամ ձեր ընդմիջման ժամանակն անցկացրեք նրանց հետ, կարդացեք նրանց համար, բերեք ձեզ հետ անհրաժեշտ մթերք, ուղեկցեք նրանց դաշտային զբոսանքների ժամանակ:

## Ցուցաբերե՛ք ճիշտ վերաբերմունք

Նայե՛ք մարդկանց աչքերին և ժպտացեք: Սովորե՛ք նրանց անունները: Հաճախ այն մարդիկ, ովքեր սարսափելի նեղ դրության մեջ են հայտնվում, սովորաբար բավարար հարգանքի չեն արժանանում: Եվ ձեր ճիշտ վերաբերմունքը նրանց կերջանկացնի ամբողջ օրվա ընթացքում:

## Բոլորն ընտանիքում

Եկեղեցում ընկերացեք մի ընտանիքի հետ, որը դժվարություններ ունի: Հրավիրե՛ք նրանց ձեր տուն ճաշի կամ դրսում նախաճաշելու: Օգնե՛ք նրանց իրենց տան կարիքների մեջ: Կամ վճարեք իրենց կոմունալ ծախսերի դիմաց:

## Հեռակա նվիրվածություն

Ֆինանսապես հովանավորեք օտարերկրյա երեխայի: Շատ ծրագրեր կան, որոնց միջոցով դուք կարող եք օգնել երեխային ստանալ բժշկական օգնություն, աստվածաշնչյան ուսուցում, հագուստ և կրթություն:

## Բացե՛ք ձեր տունը

Բացեք ձեր տունը ինչ–որ մեկի համար, ով ապրելու տեղի կարիք ունի, ինչպիսին է ուսանողը, գաղթականը կամ հղի միայնակ կինը:

## Անվճար նախաճաշ

Ձեռքի տակ պահեք արագ սնունդ, նպարեղեն: Տվեք դրանք կարիքավոր մարդկանց, որոնց հանդիպում եք ձեր ճանապարհին:

## Սիրո բժիշկ

Եթե դուք բժիշկ–մասնագետ եք, տրամադրեք ձեր ժամանակը բժշկական միսիոներությանը և՛ արտերկրում, և՛ տանը: Կամ, եթե դուք բժիշկ կամ բուժքույր չեք, կարող եք լինել լավ օգնական:

## Հոչակեք Աստծո խոսքը

*Ես կփնտրեմ արդարություն և կքաջալերեմ ընկճվածներին: Ես կպեսնեմ որբի դատը և կպաշտպանեմ որբևայրու իրավունքը:*

(Անձնավորած տարբերակ Եսայու 1:17–ից)

# Այլ նյութեր Դերեկ Պրինսի կողմից

## Գրքեր

### «Ամուսիններ և հայրեր»

Նոր Կտակարանում Աստծո ամենամեծ բացահայտումը դա Աստծո դերն է՝ որպես Հայր: Գործնական հույսի և քաջալերման միջոցով, որ առաջարկում է այս գիրքը, ցանկացած մարդ կարող է սովորել, թե ինչպես դառնալ ազդու, տպավորիչ ամուսին և հայր: Այս գիրքը պատասխանում է այնպիսի արդիական հարցերին, ինչպիսիք են՝ ինչպե՞ս պետք է տղամարդը վերաբերվի իր կնոջը և երեխաներին: Ինպե՞ս կարող է նա մարգարեի, քահանայի և թագավորի իր աստվածատուր դերերը կատարել, իրականացնել:

### «Սուրբ Հոգու պարգևներ»

Սա մի ուշագրավ գիրք է, որն օգնում է յուրաքանչյուր հավատացյալին բացահայտել իր աստվածատուր պարգևը: Այն լի է բացահայտումներով ու հայտնություններով: Դերեկն այս գրքի մեջ ձեզ ցույց կտա այն ճանապարհը, որով ընթանալիս կարող եք գործնականորեն կիրառել Սուրբ Հոգու պարգևները ձեր կյանքի մեջ:

## «Հոգևոր սպառազինություն»

Մեր կյանքը լի է պայքարով: Քրիստոնեական կյանքն էլ զերծ չէ պայքարներից: Գրքում Դերեկ Պրինսը ընթերցողին կտանի Աստծո զինանոց և կսպառազինի հավատացյալին հոգևոր զենքերով՝ դիմակայելու թշնամական հարվածներին և բեկումնային հակահարված տալու վերջինիս:

## «Դավթի տավիղի լարերը»

Աստվածաշնչի համեմունքը Սաղմոսներ գիրքն է: Դերեկ Պրինսը, խորասուզվելով այդ սաղմոսների մեջ, կբացահայտի ձեզ համար անգին գոհարներ, որոնք կզարդարեն ձեր աղոթքի և աստվածապաշտության կյանքը: Գիրքն օգնում է հավատացյալին զարգացնել անձնական աղոթքի կյանքը՝ համեմելով այն Դավթի սաղմոսներով:

## «Մուտք գործելով Աստծո ներկայության մեջ»

Այս գիրքը մի յուրահատուկ ուղեցույց է, որը կօգնի ձեզ ճամփորդելու Աստծո ներկայության մեջ տանող զարմանահրաշ ճանապարհով: Դերեկ Պրինսը, վերլուծելով հինկտակարանյան խորան տանող ճանապարհը, ցույց է տալիս մեզ Աստծուն մոտենալու և Աստծո ճանաչողության մեջ աճելու ճանապարհները: Սա գիրք է բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են

ավելի մտերմանալ Ամենակարող Աստծո հետ և բացահայտել Նրա կամքը մեր առօրյա կյանքի մեջ:

## «Պատերազմ երկնքում»

Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս, որ չարը գոյատևի:

Եթե չարը պարտվեց խաչի վրա, ինչո՞ւ է այն շարունակում գոյատևել:

Իրո՞ք հոգևոր պատերազմն իրական է:

Ի՞նչ է մեզ սպասվում վերջին օրերում:

Ինչպիսի՞ն պետք է լինի երջին օրերի եկեղեցին:

Սրանք հարցեր են, որոնց սպառիչ պատասխանները կգտնեք այս հետաքրիր և քաջալերանքներով լի գրքում:

## «Ամեն օր Աստծո հետ»

Սկսե՛ք ձեր օրն Աստծո հետ և հաջողություն կգտնեք: Այս գիրքը հիանալի նախադրյալ է նոր օրվա սկզբի համար: Այս գրքի 365 թեմաները հրաշալի խթան կհանդիսանան ձեր օրը ճիշտ սկսելու և շարունակելու համար: Գրքում տեղ գտած հռչակման խոսքերն ու աղոթքները կօգնեն ձեզ ձեր յուրաքանչյուր օրը սկսել Աստծո հետ:

# Դերեկ Պրինս

Դերեկ Պրինսը ծնվել է Հնդկաստանում բրիտանացի ծնողներից: Նա կրթություն է ստացել Անգլիայում՝ Էթոն վարժարանում և Քեմբրիջի համալսարանում որպես հունարենի և լատիներենի լեզվագետ, որտեղ Քինգսի համալսարանում դառնում է Հնագույն և Ժամանակակից փիլիսոփայության խորհրդի անդամ: Նա նաև սովորել է եբրայերեն և արամերեն ինչպես Քեմբրիջի համալսարանում, այնպես էլ Երուսաղեմի Եբրայական համալսարանում: Բացի այդ նա տիրապետել է մի շարք այլ ժամանակակից լեզուների:

Մինչ ծառայում էր բրիտանական բանակում Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, նա սկսեց ուսումնասիրել Աստվածաշունչը և ճաշակեց կյանք փոխող անսպասելի հանդիպում Հիսուս Քրիստոսի հետ: Այդ հանդիպումից հետո նա եկավ երկու եզրակացության. առաջինը, որ Հիսուս Քրիստոսը կենդանի է, երկրորդը, որ Աստվածաշունչը ճշմարիտ, կիրառական և արդիական գիրք է: Այս եզրակացությունները վերափոխեցին նրա կյանքի ողջ ուղղվածությունը: Այդ ժամանակից ի վեր նա նվիրեց իր կյանքն Աստվածաշունչն ուսումնասիրելուն և սովորեցնելուն: Նա ավելի քան 60 գրքի, մոտ

500 աուդիո և 160 վիդեոուսուցումների հեղինակ է, որոնցից շատերը թարգմանվել և տպագրվել են ավելի քան 60 լեզուներով:

Դերեկի գլխավոր շնորհը Աստվածաշնչի մեկնումն ու դրա ուսուցանումն է պարզ և հասկանալի եղանակով: Նրա ոչ աղանդավորական մոտեցումը դարձրել են նրա ուսուցանումը հարգանքի արժանի և օգտակար մարդկանց համար՝ անկախ նրանց ռասայական և կրոնական նախադրյալներից:

Դերեկ Պրինս

# ԱՍՏԾՈ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ որբերի, որբևայրիների, աղքատները և ընկճվածների համար

Թարգմանիչ՝ *Աննա Լոգյան*
Խմբագիր՝ *Վազգեն Զոհրաբյան*
Էջադրումը՝ *Գարեգին Սարգսյանի*
Շապիկի ձևավորումը՝ *Արա Կոջոյանի*

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,
չափը՝ 70x100, 1/32, ծավալը՝ 1 տպ. մամուլ:

Չկա ավելի աստվածահաճո գործունեություն, քան ծառայել հասարակության ամենախոցելի խավերին: Որքա՜ն այս աշխարհում աննեցուկ է որբը, ով ոչ միայն զուրկ է ծնողներից այլ նաև անչափահաս է, որքա՜ն խոցելի է որբևայրին, որը ոչ միայն չունի մոտիկ հարազատ ամուսին, նաև տարեց է: Հակոբոս առաքյալը նշում է, որ սա է Աստծո առջև ճշմարիտ կրոնասիրությունը. *«Սուրբ և անարատ կրոնասիրությունն Աստծո և Հոր առաջ այս է՝ որբերին և այրիներին նրանց նեղության ժամանակ այցելել և իր անձն աշխարհից անարատ պահել»* (Հակ. 1:27): Այս գիրքը մի բացառիկ նմուշ է՝ ոչ միայն հասարակության ամենախոցելի խավերին հասնելու, այլև այլոց հանդեպ գթառատությամբ և ողորմությամբ լցվելու համար:

Վանաձորի «Ավետարանական հավատքի եկեղեցի»

Վեր. դոկտոր *Ռաֆայել Գրիգորյան*